

15862

355.2  
4-96

1912

Ն. Կուպրիեանով.

Ծ. Ա. 7.252


2-42000

Կ. 8

## ԱՇԽԱՐՀԱՊԱՀ ԶԻՆԻՈՐ

(Օպոլչենից)

Բնագիրը տպւած է Թիֆլիսի տեղական բրիգադյի հրամանատար Գևորգ Մայօր Դօմբրօվսկու հաճութեամբ:



ԹԻՖԼԻՍ  
Էլեկտրասով. Օր. Ն. Աղանեանի, Պոլից. 7  
1912

2010

2001

Հ Արմ. 355.2  
2-4200<sub>2</sub> 4-96



Ն. Կ. Մ. ԹԱԳԱԽՈՐ ԿԱՅՄ  
ՆԻԿՈԼԱՅ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՇ

ԱԽՎ. № 21620

## ՌՈՒՍ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԻՄՆԸ

Տէր, պահեա զկայսր մեր.

Հզօր, ինքնակալ.

Թագաւորեա Դու մեզ ի պարծանս,

Թագաւորեա յերկիւղ թշնամեաց,

Կայսր ուղղափառ:

Տէր, պահեա զկայսր մեր:



Կ4578. ահ



29579-67

ԱՇԽԱՐՀԱՊԱՀ ԶԻՆՔՈՐՆԵՐԻ ԶՈՐԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջին կարգի աշխարհապահ զինուորները կամ մարտիկները, խաղաղ ժամանակ, զօրախաղի են կանչուում երկու անգամ—մարտիկների շարքը դասւելու առաջին և երրորդ տարիներուում։ Զօրախաղի ժամանակն ամեն անգամ որոշուում է բարձրագոյն հրամանով, որ յայտարարուում է Զինուորական վարչութեան հրամանի միջոցով։ Մարտիկներն իրենց ծառայութիւնը կատարուում են գաւառական զինուորական նաշանիկների ատեաններին կից։ Զօրակոչի ժամանակը նախօրօք յայտնուում է մարտիկներին ոստիկանութեան միջոցով։ Ժամանակին ժողովատեղին ներկայանալ չկարողացողը պիտի յայտնի այդ մասին զինուորական ատեանին։ Զօրախաղի համար, պէտքական լինեն որոշելու համար, ներկայանալուց, մարտիկները ենթարկուում են բժշկական քննութեան։

Զօրախաղի համար ժամանակին զինուորական նաշանիկին, առանց յարգելի պատճառի, չներկայացողը պատասխանատուութեան տակ է ընկնուում և զինուորական նաշայլնիկը այդպիսիներին յանձնուում է դատելու զինուորական (պօլկի) դատարանին 1869 թի Զինուորական Որոշումների ժողովածուի ՀՀII գրքի 131 և 140 յօդւածների հիման վրայ (մինչև 8 ամիս քաղաքացիական բանտարկութիւն)։

Ներկայանալուց մարտիկները պիտի ունենան գաւառական զինուորական ատեանների իրանց տւած մարտիկական վկայականները, կարգին ունաման, շո-

բեր, երեք ձեռք փոխնորդ և մի երեսարբիչ, իսկ ով կարող է՝ նոյնպէս ներքնակ և բարձի երես: Այս բոլորը պիտի դարսւած լինի տոպղակի մէջ, որը պիտի ունենայ ուսակապեր:

Պատերազմի ժամանակ մարտիկները կատարում են պահակական և կօնվօյական ծառայութիւններ, այլև կարիքի դէպրում լրացնում են զօրքի շարքերը:

Զօրախաղի ժամանակ մարտիկներին կանչում է զինւորական նաշայրնիկը և նրանցից կազմում են նոր ուստաներ, ամեն ուստա բաժանում է վզգօղների, վրգողները օտղէլէնիաների և տասնեակների (դեսեատկա): Տասնեակը կառավարում է մարտիկներից մէկը, որ կոչում է գեսեատսկի (տասնապետ), վզգօղները և օտղէլէնիաները կառավարելու համար նշանակում են ուսուցիչներ, որ լինում են ունտէրօֆիցերներ (ենթասպայ) և եֆրէյտօրներ: Ուստաները կառավարում են օֆիցերները (սպաները): Իւրաքանչիւր մարտիկ պիտի գիտենայ թէ ինքը ո՞ր տասնեակում, վզգօղում և ուստայում է ծառայում:

Ծառայութեան ժամանակ մարտիկները հազնում են սեփական ոտնաման և շորեր. կառավարութիւնից նրանց չի արւում ոչ էլ անկողին (ներքնակ, բարձ և սաւան): Իւրաքանչիւր մարտիկի կառավարութիւնից տրւում է օրական 3 գրւանքայ սև հաց, որը կարելի է փոխարինել ցորենի հացի աւելի քիչ քանակութեանայնքան, որքան արժէ 3 գրւանքայ սև հացը—ճաշ՝ բորշչ կամ սուլպ  $\frac{1}{2}$  գր. մսով,  $\frac{1}{2}$  մսխալ թէյ և 6 մսխալ շաքար այլև ամբողջ ծառայութեան միջոցում  $\frac{1}{2}$  գր. սապոն: Փող չի տրւում:

Գիշելիքներ, ՈՐ ՊԻՏԻ ՍՈՎՈՐԻ ՄԱՐՏԻԿԸ  
ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԻԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ

Տէրունական աղօրք: Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն քո: Եղիցին կամք Քո, որպէս յերկինս և յերկիր: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեաի չարէն. զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւետեանս, ամէն:

Աղօրք Թագաւորի եւ Հայրենիքի համար: Տէր, փրկիր Քո ժողովրդին և օրհնիր Քո ժառանգութիւնը: Տնուր յաղթութիւն մեր ուղղափառ ԿԱՅՍՐ ՆԻԿՕԼԱՅ ԱԼԵՔՍԱՆԴՐՕՎԻՉԻն թշնամիների դէմ և Քո խաչով պահպանիր նրա կեանքը:

Մարտիկի նօանակութիւնը: Մարտիկը կայսեր և Հայրենիքի ծառան և նրանց, արտաքին ու ներքին թշնամիներից, պաշտպանն է: Արտաքին թշնամի կոչում են այն տէրութիւնները, որոնց հետ Ուստաստանը պատերազմում է. ներքին թշնամի կոչում են այն բոլոր մարտիկ, որոնք օրէնքներին հակառակ են գնում:

Երդում: Երդմամբ մարտիկը Աստծու առաջ խոստանում է հաւատով և ճշմարտութեամբ ծառայել Թագաւորին, Գահաժառանգին ու Հայրենիքին և պաշտպանել նրանց, եթէ ինքը մեռնելու էլ լինի:

Դրօւակի նօանակութիւնը: Դրօշակը մի սրբութիւն է, որը մարտիկը պարտաւոր է պաշտպանել մինչև իր արեան վերջին կաթիլը: Դրօշակը, իւրաքանչիւր պոլկի, չորհում է ԹԱԳԱԼՈՐ ԿԱՅՍՐԸ:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ԱՆՁՆԱՀՈՐՈՒԹԵԱՆՑ  
ԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԻՏՈՂՄՆԵՐԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ Թագաւոր  
Կայսր Նիկոլայ Ալէքսանդրօվիչ Երկրորդ:  
ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ Թագուհի  
Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորօվնա:  
ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ Թագաւորանդ Յեսարևիչ և մեծ իշխան Ալէքսէյ Նիկոլաևիչ:  
Օդուտափառ Մայր Թագաւոր Կայսր ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդորօվնա:

Ով է կոչում իշխանաւոր (նաշայնիկ): Իշխանաւոր կոչում են Ռուսաց զօրքի բոլոր սպաները (օֆիցերները), իր ուստի Փելդֆերելլ և ենթասպաները (ունտեր-օֆիցերները), այն եֆրէյտօրները և հասարակ զինւորները (բեագույ), որոնք նշանակում են զվուդներ կամ օտղէլէնիաներ կառավարելու համար նոյնպէս և իր ուսուցիչը:

Ով է կոչում աւագ (ստարշի): Աւագ կոչում են իր պօլիկի այլ ուստաների և բոլոր զօրամասերի Փելդֆերելներն ու ենթասպաները, ոչ-ստրօեւոյ աւագ կարգի զինւորները և իր ուստայի այն եֆրէյտօրները, որոնք իշխանաւոր չեն նշանակած:

ԳԵՆԵՐԱԼՆԵՐԻ, ՇՏԱԲ Եւ օքեր սպաների ՏԻՏՈՂՄՆ Եւ ԱՐՏԱՔԻՆ ՆԵՐԻՆ

ՕԲԵՐ-ՕՖԻՑԵՐՆԵՐԸ իրանց պագօնի վրայ ունին մի գունաւոր շերտ (պօլուկա). պրատօրչիկներն ու-

նին մէկ, պօդպօրուչիկը՝ երկու, պօրուչիկը՝ երեք և շտաբս-կապիտանը չորս աստղեր. Նրանց տիտղոսն է՝ Զերդ մեծապատութիւն (Վաշէ բլագօրօդիէ): Կապիտանն ունի մի շերտ առանց աստղի. Նրա տիտղոսն է՝ Զերդ բարձր բարեծննդութիւն (Վաշէ վիսօկօբլագօրօդիէ):

Շտաբ-օֆիցերական աստիճանը երկու է. պօդպօլկօվնիկ և պօլկօվնիկ: Պօդպօլկօվնիկն ունի երկու գունաւոր շերտ և երեք աստղ, իսկ պօլկօվնիկը՝ երկու գունաւոր շերտ առանց աստղի: Նրանց տիտղոսն է՝ Զերդ բարձր բարեծննդութիւն (Վաշէ վիսօկօբլագօրօդիէ):

ԳԵՆԵՐԱԼԱԿԱՆ աստիճանը երեք է. ԳԵՆԵՐԱԼ-Մայոր, ԳԵՆԵՐԱԼ-Լէյտէնանտ և իսկական ԳԵՆԵՐԱԼ: ԳԵՆԵՐԱԼ-մայօրի պագօնը ամբողջ բագօժկից է երկու աստղով, ԳԵՆԵՐԱԼ-Լէյտէնանախինը՝ նոյնպէս՝ երեք աստղերով: Սրանց տիտղոսն է՝ Զերդ գերազանցութիւն (Վաշէ պրեվուսիոդիտելստվօ): Իսկական ԳԵՆԵՐԱԼՆ ունի նոյնպիսի պագօն առանց աստղի, տիտղոսն է՝ Զերդ բարձր գերազանցութիւն (Վաշէ վիսօկոպերազնութելստվօ):

ՍՏՈՐԻՆ զինւորականներին արտաքին նշաններով իրարից զանազանելլը: Ֆելդֆերէլի պագօնի վրայ լայնութեամբ կարւած է լինում գալուն, իսկ ունտէր-օֆիցերինը՝ երիզ (տեսմա): Պօդպրապօրչիկի պագօնի մէջտեղից երկարութեամբ կարւած է լինում գալուն: Այս բոլոր զինւորականների օձիքի վերին մասի շուրջը կարւած է լինում գալուն և շինելի կոճկածակերին կոճակներ: Եֆրէյտօրի պագօնի վրայ լայնութեամբ կարւած է լինում մի երիզ, կրտսեր-ուն-

տեր-օֆիցերինը երկու, իսկ աւագ-ունտեր-օֆիցերը—  
երեք: Աւագ կարգի նեստորօնէրը ունին նոյնպիսի  
պագօններ, ինչպէս ունտէր-օֆիցերները, բայց նրանց  
օձիքի գալունը կարւած է լինում ներքին մասում:  
Կանդիտատները բացի դրանից ունենում են ձախ  
թևի վրայ անկիւնածե կարւածք:

Մրանց անուանում են պարոն ֆելդֆերել, պարոն  
պօդպրապօրշչիկ, պարոն ունտէր-օֆիցեր, պարոն  
եֆրէյտօր և պարոն տասնապետ (դեսեստսկի):

ԻՇԽԱՆԱՀՈՐՆԵՐԻ ԿՈՉՈՒՄԸ, ԱՍՏԻՃԱՆԸ ԵՒ ԱԶԳԱ-  
ՆՈՒՆՆԵՐԸ:

Տասնապետ

Ուսուցիչ

Ռոտնի կօմանդիր

Գաւառական զինուորական նաչայլնիկ

Տեղական բրիգադայի նաչայլնիկ

Շրջանի գորքերի հրամանատար

Զինուորական նախարար

ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ:

Զինուորական կարգապահութիւնը կայանում է  
իշխանաւորների հրամանները անթերի և առանց հա-  
կածառելու կատարելում, խիստ աստիճանայարգու-  
թեան և ծառայութեան պարտականութիւնները բա-  
րեխզարկն կատարելու մէջ: Զինուորական կարգա-  
պահութիւնը պարտաւորեցնում է կատարել այն ա-  
մենը, ինչ որ կը հրամայի իշխանաւորը:

Նպատակում: Իւրաքանչիւր մարտիկ իր խըն-  
դիրները և բացատրութիւնները կարող է տալ մի-  
միայն իր մերձաւոր իշխանաւորին—տասնապետին:  
Ինչ որ մարտիկի հետ պատահելու լինի այլև բոլոր  
նկատողութիւնների, նրան տւած հրամանների մա-  
սին, իսկոյն պիտի յայտնի իր տասնապետին:

Աստիճանայարգութիւն: Մարտիկը պիտի բոլոր  
իշխանաւորներին և աւագներին միշտ յարգանքով  
վերաբերելի թէ ծառայութեան ժամանակ և թէ ծա-  
ռայութիւնից գուրբ:

Մարտիկի վերաբերմունքը դէպի իշխանաւոր-  
ները զանազան դէպիերում: Իշխանաւորների կամ ա-  
ւագների հետ խօսելիս մարտիկը պիտի կանգնի  
համգիստ (սմիրնօ), ուշագրութեամբ լսի ինչ որ ա-  
սում են և լրջօրէն, առանց շտապելու պատասխանի  
տւած հարցերին: Եթէ այդ ժամանակ մարտիկը զըլ-  
խարկ ունի ծածկած, ապա խօսակցութեան ժամա-  
նակ պիտի ձեռքը կլցնի գլխարկին և այդպէս պահի  
մինչև որ չեն հրամայի ձեռքն իշեցնել: Եթի իշխա-  
նաւորը կանչի իրա մօտ, պիտի ուղղի շորերը, կապի  
գոտին, եթէ կապած չունէր, և իշխանաւորին երկու-

երեք քայլ մնացած՝ կանգնի՝ ու ձեռքը կպցնի գըլ-  
խարկին:

Իշխանաւորի ողջունին պիտի պատասխանել՝  
Առողջութիւն եմ ցանկանում: (զգրավեա  
ժամանում), իսկ եթէ իշխանաւորը շնորհակալութիւն է  
յայտնում, պիտի պատասխանել՝ աշխատելու ուրախ  
եմ (ուսդ ստարատուեա). եթէ մնաս բարե է ասում՝  
բարի ճամբայ (սչաստիւաւո պուտի) կամ բարով  
մեաք (սչաստիւօ օստավատուեա): Ամեն դէպքում պի-  
տի աւելացնել իշխանաւորի տիտղոսը:

Քաղաքավարական կանոններ աւագների վե-  
րաբերամբ: Իւրաքանչիւր դէպքում, երբ մարտիկն  
հանդիպում է աւագին, պիտի ուշադիր լինի և յար-  
գանք ցոյց տայ: Եթէ մարտիկը նստած է, ապա  
աւագը մօտենալուս նա պիտի վեր կենայ և նրա ա-  
ռաջարկած հարցերին պատասխանի կանգնած: Հրա-  
ման կամ նկատողութիւն ստանալիս պիտի ձեռքը  
կպցնի գլխարկին. արւած հրամանը կրկնի: Աւագի  
ներկայութեամբ ծխել չէ կարելի, եթէ նա չթոյ-  
լատրի:

Առհասարակ մարտիկը պիտի միշտ ուշադիր և  
քաղաքարի լինի դէպի աւագները: Օրինակ եթէ  
աւագն ուղում է գոնով անցնել, մարտիկը պիտի  
դուռը բաց անի և սպասի մինչև նրա անցնելը. եթէ  
աւագն ուղում է նստի՝ աթոռ պիտի բերի, պիտի  
վերցնի աւագի վայր ձգած բանը, օգնէ ոտնաման-  
ները կամ շորերը հագնելիս և այն:

Զինուրական պատիւ (չես) տալու կանոնները:  
Պատիւ (չեստ) տալիս են այսպէս. առանց իրա-  
ցանի կանգնած ժամանակ—պատ կերպով բարձ-

րացնելով աջ ձեռքը կպցնել գլխարկի ներքին մա-  
սին և ճամփու դնել իշխանաւորին աչքերով:

Առանց իրացանի գնալիս—անել նոյնը, իշ-  
խանաւորից 4 քայլ հեռաւորութեան վրայ առանց  
ձեռքը շարժելու: Եթէ պիտի պատիւ տալ ֆրօնտ  
կանգնելով, ապա երեսը դարձնել դէպի անցնող իշ-  
խանաւորը, ձեռքը կպցնել գլխարկին և այնքան կանգ-  
տոնել, մինչև իշխանաւորն անցնի:

Հրացանով կանգնած ժամանակ—կանգնել հան-  
գիստ (սմիրնօ) հրացանի բռնել «ու նօդի» (ոսի  
մօտ) և ճամփու դնել իշխանաւորին աչքերով: Եթէ  
հրացանը մէջքն է զցած, պատիւ պիտի տալ այնպէս,  
ինչպէս հրացան չունենալուց: Եթէ հրացանն ուսին է,  
ապա պատիւ տալուց պիտի գլուխը դարձնել իշխա-  
նաւորի կողմը և ճամփու դնել աչքերով. ձախ ձեռքը  
ապատ կերպով շարժել:

Հրացան ունենալուց «վօ ֆրօնտ» չեն կանգնում:  
Եթէ մարտիկը բան տանելիս լինի, պատիւ տա-  
լու ժամանակ այդ բանը պիտի բռնի ձախ ձեռքին և  
պատիւ տայ սովորական կերպով. իսկ եթէ այնպէս  
ծանր է, որ մի ձեռքով չի կարող պահել, ապա պի-  
տի գլուխը դարձնի դէպի իշխանաւորի կողմը և ճամ-  
փու դնի աչքերով:

Չիով, կառքով, ելէկտրաքարշով և այլն գնալիս  
պատիւ տալու համար պիտի աջ ձեռքը կպցնի գըլ-  
խարկին և ճամփու դնի իշխանաւորին աչքերով:

Վօ մոօն կանգնելով պատիւ պիտի տալ.  
ԹԱԳԱԽՈՐ ԿԱՅՍԵՐ և Արքայական Տան բոլոր Ան-  
դամներին, դրօշակների և շտանդարտների, իսկական  
ծառայութեան մէջ գտնող և պաշտօնաթող (օսու-

տաւնոյ), բայց համազգեստ (Փօրմա) կըող գեներալներին, այն գաւառական զինւորական նաշայլնիկին, որի մօտ մարտիկն իր ծառայութիւնն է կատարում և իր ուստի կամանդիրին:

Վո Երօն չկանգնելով պատիւ են տալիս Ռուսաց զօրքի բոլոր օֆիցերներին, զինւորական բոժիշկներին, այն զինւորական ատենի գործավարին (գէլօպրօփօղիստել), որտեղ մարտիկը ծառայում է, ստորին կարգի զինւորականներից իր անմիջական իշխանաւորներին և հոգեոր թափորներին (պրօցէսիս): Մնացած ստորին կարգի զինւորականներին (նիժնի չին) պատիւ են տալիս իբրև փոխադարձ բարեւ:

Դանգաւուելու կերպը (Ուսուցանուում է երկրորդ անգամ ծառայութեան կանչւելիս): Իւրաքանչիւր մարտիկի թոյլատրւում է գանգատւել եթէ նրան վիրաւորել են կամ չեն տեւել այն, ինչ որ պիտի տան: Ինսպէկտօրական հարցմունքի ժամանակ գանգատւում են բերանացի, իսկ մնացած ժամանակները բերանացի կամ գրաւոր: Գրաւոր գանգատ ներկայացնողը պիտի ստորագրի ինքը: Գրաւոր գանգատը պիտի ներկայացնել այն անձի անմիջական իշխանաւորին, որից գանգատւում են. օրինակ իր տասնապետից պիտի գանգատւել իր զգլողնի կամանդիրին, զգողնի կօմանդիրից ֆելդֆերելին և այլն:

Միանգամայն արգելում է սուտ գանգատներ տալը, իշխանաւորի տւած պատժի խստութեան պատճառով յայտնած գանգատը, եթէ իշխանաւորն իր իրաւունքների սահմանից չհ դուրս եկել, նոյնպէս և մի քանի հոգի միասին գանգատ տալը: Արգելում է գանգատւել ժամասացութեան, զօրախաղի և առ-

հասարակ ծառայութեան պարտականութիւնները կատարելիս և այն դէպքում, երբ մի ինսպեկտօրսկի քննութիւն բաց է թողել:

Անինից գանգատի համար մարտիկն ենթարկւում է կարգապահական պատժի և մինչև անգամ կարող է դատի ենթարկւել:

Մարտիկիները ենթարկւում են հետեւեալ կարգապահական պատիմներին—զօրանոցից (կաղարմից) կամ բակից դուրս գալու արգելում, հերթից դուրս բանելու կամ ծառայութեան ուղարկւել և բանտարկութիւն (հասարակ, խիստ և ամենախիստ):

Կարևոր յանցանքների ու մեղքերի համար մարտիկներին կարող են դատի ենթարկւել:

### ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Իր ծառայութեան տեղը գալուց մարտիկը բացի հրացանից ստանում է հետեւեալ իրերը—մարտիկի խաչ, գլաւարկին ամրացնելու համար. մի գօտի իր բլեախայով, փամփուշտաման և ամրութիւններ շինելու գործիքներ:

Մարտիկի պարտականութիւնները: Իւրաքանչիւր մարտիկ Թագաւորի և Հայունիքի ծառան է և պարտաւոր է պաշտպանել նրանց թէկուզ մեռնելու էլ լինի:

Ընդհանուր կանոններ ծառայութեան վերաբերեալ: Մարտիկը պիտի յիշի և չխախտի իր երդումը, լինի ճշմարիտ, բարեպաշտ, քաջ, կատարէ իր իշխանաւորների հրամանները, համբերութեամբ տանի ծառայութեան ծանրութիւնները և ծախորդութիւնները, օգնէ ընկերներին խօսքով ու գործով, յետ

պահէ նրանց վաստ արարքներից և ազատէ նրանց փորձանքից, մանաւանդ պատերազմի ժամանակ, կեանքը նոյնիսկ շմնայելով։

Իրան ու իր առարկաները մաքուր ու կարգին պահելու կանոններ։ Ամեն առաւօտ անկողնից ելնելուց պիտի ուղղէ անկողինը, մաքրէ շորերը, կօշիկները, երեսը և ձեռքերն, անպատճառ սապոնով, լւանայ, բերանը ողողէ, սրբւի միշտ մաքուր երես-սրբիչով, յետոյ ներկայանայ իբ տասնապետին առաւոտեան զննութեան (օսմօտը)։ Գնայ բաղնիք առնուազն ամիսը երկու անգամ, իսկ ամառը ըստ հնարաւորութեան յաճախ լողանայ այն տեղում, որ կնշանակէ իշխանութիւնը։ Մարտիկը պիտի յաճախ լւանայ ուսները, մազերը կարճ խուզի, փոխնորդը փոխէ առնուազը շաբաթը մի անգամ, թաց փոխնորդ չհագնէ, տոպլակի իրերը պահի կարգին ու մաքուր, անկողինը թափ տայ առնուազն շաբաթը մի անգամ։ Հիւանդանոց կամ բանտարկութեան գնալիս ունեցածն յանձնէ իր տասնապետին։

Ազատ ժամանակները մարտիկը կարող է զբաղւել իր գործերով։ կարկատան անել, երգել, գործիքներ ածել, միայն ընկերներին չպիտի խանգարի։ Ճաշից յետոյ հանգստեան ժամերին երգն ու գործիք ածելն արգելում է։ Ոգելից խմիչքներ զօրանոց չբերի։ հիւրեր ներս բերել կարելի է իշխանութեան թոյլտութեամբ։ հիւրերի զօրանոցում քնեին արգելում է։

Բակից դուրս գալ առանց իշխանութեան թոյլտութեան չէ կարելի, իսկ թոյլտութեան դէպում պիտի ներկայանալ ուստի հերթապահին (դեժուրնի),

ցոյց տալ արձակման նշանը և յայտնել թէ մինչև որ ժամն է արձակւած քաղաք գնալու։ Փողոցում պիտի լինի վայելուչ, զինետներ չմտնի։ Արձակումից վերագանակուց պիտի ներկայանայ ուստի հերթապահին։

Ուօսայի կամ կօմանդայի եւ դոների մօտի օրապահի (դնեւայլինի) պարտականութիւնները։ Օրապահ նշանակւած մարտիկները ենթարկում են ուստի հերթապահին (դեժուրնի պո ուստէ)։ ծառայութեան ժամանակ կրում են սառը գէնքը։ Օրապահները պարտաւոր են միշտ գտնւել ուստայում և բոլոր նկատողութիւնների, անձշտութեանց և եղելութիւնների մասին իսկոյն տեղեկութիւն տալ ուստի հերթապահին։ Երբ մարտիկները զօրանոցում չեն, հսկէ, որ իրեղէններ չկորսւին, կողմնակի անձինք առանց պատշաճաւոր թոյլտութեան ուստայում չինին նոյնպէս և կողմնակի անձինք աղմուկ չհանեն ու ժամանակին գնան։ Գիշերը հսկէ, որ լամպաները կանոնաւոր վառւին։ Զօրանոցում կամ նրա մօտ հրդէն պատահելու դէպում զարթեցնէ բոլորին։ Հերթապահ օրապահներին արգելում է քնելու պառկելը, իսկ ոչ—հերթապահները կարող են հանգստանալ։ Ռոտայում գտնւող հսկողութեան տակ եղողներին հետևէ։

Հերթապահ օրապահին փոխարինելու համար օրապահ ուղարկում է ուստայի հերթապահը իսկ փոխւողը ներկայանալով նրան, իր պահակատեղում կատարւած բոլոր եղելութեանց մասին տեղեկութիւն է տալիս։

Դոների մօտի օրապահները պարտաւոր են չթոյլտնել մարտիկներին և ստորին կարգի զինուորականներին (մի շինութեան մէջ ապրելու դէպում) առանց

համազգեստի, ոչ զգաստ տեսքով այլև արձակման նշան կամ տոմսակ չունեցողներին դուրս գալ: Երեկոյեան, անունները կարդալուց յետոյ, թողնել նրանց, որոնք ունին գրաւոր թոյլտութիւն: Դիտել կողմնակի անձանց, որոնք բան են դուրս տանում, եթէ կասկածելի է թէ գողութիւն է կատարւել, ապա կալանաւորել դուրս եկողին և կանչել ոտի հերթապահին:

Օրապահը կանչում է ոտի հերթապահին եթէ տեսնում է որ զօրանոցի մօտ ստորին կարգի զինորականները կռաւում են կողմնակի անձանց հետ, հրդէի ժամանակ և արտասովոր դէպքերում: Օրապահները չփառի թոյլ տան բակը և զօրանոցը ներս մտնելու վաճառականներին, թափառական երաժիշտներին և աղքատներին:

Մարտիկ սասնապետի պարտականութիւնները (պարտադիր է միայն տասնապետների համար): Տասնապետն իր տասնեակի անմիջական իշխանաւորն է: Նա հակում է իր ստորադրեալ մարտիկների բարք ու վարգի և ծառայութեան պարտականութիւնների ճիշտ կատարելու վրայ: Ռոտից հեռացող մարտիկներից յետ է վերցնում տէրութեան պատկանող իրերը: Բոլոր հիւանդ մարտիկների մասին տեղեկացնում է զղվոդնի կամանդիրին:

ՔԱՂԱՔԸ.ՊԱՀ ԶՈՐՔԻ (ԳԱՐՆԻՉՈՒԻ) ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Պահակախմբերի նշանակութիւնը: Պահակախումբ (կարառու) կոչում է զինւած զինորական խումբ, որ նշանակում է Պետական գոյք, բանտար-

կեաներ, կարգ ու կանոն պահպանելու այլև պատիւներ (պօչեստի) տալու համար:

Պահակախմբի մէջ պիտի պահպանւի խիստ կարգ ու կանոն: Ոչ ոք պահակատնից (կարառնօէ պօմէշչէնիէ) առանց իշխանաւորի թոյլտութեան չի կարող հեռանալ: Երեկոյեան զարեայից մինչեւ առաւօտեան զարեան նրանք, որոնք պիտի պահակատեղիներում (պօստ) կանգնեն, կարող են հանգստանալ առանց հանւելու: Երգ, երաժշտութիւն և ամեն տեսակ խաղեր պահակախմբում արգելում է. պահակատանը ողելից խմիչքներ բերելն արգելում է:

Ով է կոչում պահակապես: Պահակախմբի միջի աւագը (ստարշի) կոչում է պահակապետ (կարառնի նաշայինիկ): Եթէ պահակախմբի գլխաւորը հասարակ զինուոր է կամ եֆրեյտօր, այդպիսի պահակախումբը կոչում է եթրէյօրական, եթէ ունտէրօֆիցերական և եթէ օֆիցեր է օմիցերական:

Ով է կոչում ոազվօդեաչի: Թազվօդեաչի կոչում է այն ստորին կարգի զինորականը (նիժնի չին), որ պահակներին (չասօվօյ) տեղաւորում է (կանգնեցնում է) պահակատեղիներում և քննում՝ կարգին է ստացւած և յանձնւած պահակատեղին (պօստ): Թազվօդեաչին կատարում է ԹԱՂԱՀՈՐ ԿԱՅՍԵՐ, պահակապետի ու պահակի ունտէրօֆիցերի հրամանները:

Ով է կոչում պահակ: Պահակ (չասօվօյ) կոչում է ամեն մի զինուոր, որ կանգնեցրած է պահակատեղիում՝ զինւած օրացնանով իրամ մերկացրած սառը զէնքով:



Պահակի ընդհանուր պարտականութիւնները եւ պիտի նա զէնիք գործածէ: Պահակը պարտաւոր է ուշադրութեամբ հսկել իր պահակատեղին և իր հրակողութեան յանձնւած բաները, չհեռանալ պահակատեղուց մինչև որ չփոխվի կամ չհեռացվի, նոյնիսկ եթէ կեանքին վտանգ սպառնայ: Երբ պահակատեղում օտարդէն պատահի, կամ անկարգութիւն ծագի, որի առաջն ինքը չկարողանայ առնել կամ եթէ ինքն հիւանդանայ՝ կանչում է ուազվողեաշչուն:

Պահակն իր հրացանը կարող է տալ միայն ԹԱԴԱՀՈՐ ԿԱՅՍԵՐ անձնական հրամանով:

Պահակին փոխել կամ պահակատեղուց հեռացնել կարող են՝ պահակապետը (կարառւնի նաշայրիկ), պահակի ունտէր-օֆիցերը և իր ուազվողեաշչին:

Պահակը զէնք է գործ ածում երեք դէպքում:

1) Երբ յարձակւում են իր հսկողութեան յանձնուած պահակատեղու վրայ,

2) Երբ բանտարկեալ է փախչում և

3) Երբ յարձակւում են իրա վրայ:

Պահակը կատարում է պահակապետի, պահակի ունտէր-օֆիցերի և իր ուազվողեաշչու հրամանները:

Պահակը պահակատեղում պիտի կանգնի աշալուրջ, ոչ մի բանով չգրաւեի, կողմնակի անձանց պահակատեղուն մօտ չթողնի: Պահակին արգելուում է պահակատեղում նստել, ուտել, խմել, ծխել, քնել քնական պահանջները կատարել, կողմնակի անձանց հետ խօսակցել և դրամ ընդունել:

Պահակի առանձին պարտականութիւնները.

1) բանտարկեալների մօտ, 2) դրամարկղի մօտ, 3) վառողի մառանի մօտ և 4) հրդէնի ժամանակ (ուսու-

ցանւում է երկրորդ անգամ ծառայութեան կանչւած ժամանակ):

Բանտարկեալներ հսկող պահակը ոչ ոքին չի թողնում նրանց մօտ. նրանց էլ չի թողնում դուրս գալու առանց պահակապետի կամ ուազվողեաշչու թոյլտւութեան:

Բանտարկեալների կամերաների մօտ կանգնած ժամանակ պատուհանից դիտում է բանտարկեալներին և նկատածների մասին, կարևոր դէպքում, զեկուցանում է պահակապետին:

Պահակը հսկում է, որ բանտարկեալները պատուհաններից ոչինչ դուրս չգցեն, պատուհանի փեղկերը չփչացնեն, բացւածքները չփորեն, կողմնակի անձանց հետ չխօսեն, չծխեն, թուղթ (կարտ) ու ուկրախաղ չխաղան և աղմուկ չհանեն:

Երբ բանտարկեալները չեն կատարում նրա պահանջը, ապա սովորիչով (սւիստօկ) կամ ձայն տալով կանչում է պահակապետին կամ ուազվողեաշչուն, իսկ ծայրայեղ դէպքում կարող է զէնք գործածել:

Սովորիկի, դրամարկղի եւ մառանի պահակը ոչ ոքի մօտ չի թողնում առանց ուազվողեաշչու կամ պահակապետի: Երբ դրամարկղը բաց է ապա, կնիքը քակելուց մինչև դրամարկղի փակելն ու կնքելը, պահակը ոչ ոքի մօտ չի թողնում, առանց այն մարդու թոյլտւութեան, որը ուազվողեաշչու ներկայութեամբ քակել է կնիքը: Հսկել, որ դրամարկղի վրայի կնիքը նման լինի կնիքի հետքին (ալէպօկ) և դրամարկղի արտաքին անվնասութեան ու փականների վրայ:

Վառողի մատանի (պօրօխօվօյ պօզրեթ) մօտի պահակն հսկում է, որ մառանից 50 քայլ այն կողմ

ոչ ոք կրակ չանի, հրացան չարձակի և կարգով կամ  
երիվարով արագ չանցնի:

Հրդեհի ժամանակայ պահակն ընդունում է իր  
հսկողութեան տակ ամեն բան, ինչ որ բերում յանձ-  
նում են, բայց ոչ ոքի, առանց ռազվօդեաշչու, ոչինչ  
չի տալիս:

Պահակների պատիւ (Jesus) տալը: Բոլոր ներքին  
պահակատեղիների, նոյնպէս և դրօշակների ու եկե-  
ղեցիների մօտի պահակները կանգնած տեղում հրա-  
ցանը «ոտին» (ու նօգի) բռնած են պատիւ տալիս  
«Եֆրէյտօրի պէս» (այս Եֆրէյտօրսկի) իսկ մնացած  
պահակները պատիւ են տալիս «Նա կարառու» վերց-  
նելով: Վրաններում ապրելիս բոլոր պահակները պա-  
տիւ են տալիս հրացանը «Նա կարառու» վերցնելով:

Պահակը պատիւ է տալիս հրացանը «Նա կարա-  
ռու» վերցնելով — ԹԱԳԱԼՈՐ ԿԱՅՍԵՐԻՆ և ԿԱՅՍԵՐԱ-  
ԿՈՆ ՏԱՆ բոլոր Անդամներին, բոլոր գեներալներին,  
Ռուսաց զօրքի բոլոր օֆիցերներին, դրօշակների և  
շամփարտների, հոգեոր թափորներին և այն թաղման  
գնացքներին, որոնց ուղեկցում են զինւորական խըմ-  
բեր (կօմանդա):

Հանգիստ (սմիրնօ) կանգնելով պահակը պատիւ  
է տալիս — պօդպրապրշիկներին, բոլոր ունտէր-օֆի-  
ցերներին, ստորին կարգի զինւորականներից իր ան-  
միջական իշխանաւորներին, իւր ռազվօդեաշչուն, այն  
հասարակ զինւորներին (րեազօվօյ), որոնք ունին ի  
նշան զերազանցութեան Զինւորական շքանշան և այն  
թաղման գնացքներին, որոնց զինւորական խումբ չէ  
մասնակցում: Պահակները առանց «Նա կարառու»  
վերցնելու հանգիստ կանգնելով պատիւ են տալիս.

1) Երբ իշխանաւորն անցնում է յետեկի կողմից, 2)  
արտաքին պահակատեղիներում (նարուժնի պօստ) երե-  
կոյեան զարեայից մինչև առաւօտեան զարեան, 3)  
հրդէհի ժամանակ, 4) բանտարկեալների կամերայի  
մօտ և 5) բերդի բակի ներսում:

Կօնվօյի պարտականութիւնները: Մի բերդից միւ-  
սը կամ բերդից դատարան և այն բանտարկեալներ  
տանելիս նրանց ուղեկցելու համար նշանակում են  
ստորին կարգի զինւորականներ, որոնք կոչւում են  
կօնվօյները: Բանտարկեալներ ուղեկցելիս պահակը  
պարտաւոր է 1) թոյլ չտալ, որ բանտարկեալը փախ-  
չի, 2) թոյլ չտալ, որ բանտարկեալները ողորմութիւն  
խնդրեն և որևէ յարաբերութիւն ունենան կողմանի  
անձանց հետ, 3) եթէ յարձակում լինի բանտար-  
կեալների վրայ, պահապանել նրանց:

Արգելում է բանտարկեալներ տանել այն պա-  
լանների մօտով, որտեղ ապրում են ՆՈՅԻՆ ԿԱՅՍԵ-  
ՐԱԿՈՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ, այն շուկաներով և այն-  
պիսի տեղերով, ուր շատ ժողովուրդ է խոնւած:

Կօնվօյները զէնթի են դիմաւմ չորս դէպքում:  
1) Երբ յարձակում են կօնվօյի վրայ, 2) Բանտար-  
կեալին պաշտպանելիս, 3) Երբ բանտարկեալը փախչում  
է և 4) Երբ հրամայի կօնվօյի գլխաւորը:

Կօնվօյները ոչ ոքի պատիւ չեն տալիս, այլ հան-  
գիստ են կանգնում երբ շինութիւնների մէջ են:

ՀՐԱՅԱՆԱՋԳՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ծանօթութիւն հրացանի նետ: Ժողովատեղին,  
Զինւորական նաջայնիկի մօտ, ծառայութեան զալուց,  
մարտիկին տրում է հրացան:

Հրացանը նրա համար է, որ արձակենք և խո-  
յենք (սպանենք թշնամուն): Որպէս զի հրացանը  
չփշանայ, պիտի զգոյշ վարւենք նրա հետ, գիտենանք  
նրան մասերի բաժանել, սարքել, մաքրել, ճանաչենք  
բոլոր մասերը և նրանց նշանակութիւնը:

1891 ԹԻԱԿԱՆԻ ՏԵՍԱԿԻ (ՆԱՊԵՂԻ) Յ ԳԾԱՆԻ ՀՐԱ-  
ՑԱՆԻ ՀԱՄՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Հրացանի մասերը.

ԱՏՈՂ (փողը) ծառայում է նրա համար, որ  
ուղղութիւն տայ գնդակի թոփչին: Ստուօն ունի կա-  
նալ (անցք) և կտրւածքներով (նարէզ) որոնք ստի-  
պում են գնդակին պտտւել, որն առաջացնում է մեծ  
կայունութիւն ու յարմարութիւն նշանառութեան հա-  
մար:

Պատրոնիկը (փամփշտատեղ) փամփուշտը տե-  
ղաւորելու համար է:

ՍՏՎՈՅՆԱՅԱ կօրօբկան—զատորը տեղաւորելու  
համար է:

ՕՏՍԵԼԿԱ-ՕՏՐԱԺԱՏԵԼ նրա համար է, որ փամ-  
փուշտները, որոնք պիտի անցնեն մագաղիննայա կօ-  
րօբկից դէպի ստվօլը, բաժանէ իրարից:

ՍՊՈՒՏԻԿՈՎՅ մեխանիզմը ծառայում է պայթիւն  
առաջացնելու համար. նա բաղկացած է սպուտիկովյ  
կրիչօկից, որ կուրօկը ցածրացնելու համար է և  
սպուտիկովյ պրութինից, որը բաեօկը խփում է կապ-  
սիլին:

ՊՐԻՋԵԼ եւ մուշկան ծառայում են զանազան

տարածութեան վրայ, մինչև 2700 քայլ, նշանառու-  
թեան համար:

ԶԱՏԻՈՐ նրա համար է, որ փամփուշտը մտցնի  
փամփուշտատեղը (պատրոննիկ) և փակի ստուլը հրա-  
ցանաձգութեան ժամանակ:

ՄԱԳԱԳԻՆԻԱՅ կօրօբկան փամփուշտներ տե-  
ղաւորելու համար է:

ԼՕԺԱՆ (զօնդաղը) հրացանի զանազան մասերը  
իրար հետ միացնելու և հրացանի գործելու համար  
է: Հրացանաձգութեան ժամանակ ստուլը տաքանում  
է, ուստի ձեռքը չայրելու համար նրա վրայ դրւում է  
ստօլի նակարական:

ՇՏԻԿԸ (սւինը) նրա համար է, որ խոցենք հրա-  
ցանով: Ստուլի կանալը և պատրօննիկը մաքրելու  
համար լօժայի կտրւածքի մէջ վինտօվ ամրացնում է  
շօմպօլը:

Հրացանի պրիբօներն են. երկու լօժայի կոյլցօ  
(օղակ) ստվօլը և ստվօլի կօրօբկան լօժային միաց-  
նելու և երկու անտարկա հրացանի բեմենը (փոկը)  
ամրացնելու համար:

Հրացանի պրինադիմօներն են. շօմպօլնայա  
մուժաւ ու շպիլկա, դույլնայա նակարակա եւ վկլա-  
դիկ:

ՊՐՈՏԻՐԿԱՆ հրացանը շրբի կտորներով կամ պակ-  
լեայով (վուշով) մաքրելու համար է:

ՕՏՎԵՐՏԻԿՈՎ ամրացնում և թուլացնում են հրա-  
ցանի վինտերը (պտուտակները):

Հրացանի բնմենը (փոկը) նրա համար է, որ հը-  
րացանը ուսը կամ մէջքը գցւի:

ՊԱԼՈՉԿԱՆԵՐԸ (փայտերը), պակեան վուշը, մա-

ուր շորի կտորները, սմազկան եւ նաւքը հրացանը  
մաքրելու համար է:

Փամփուչը բաղկացած է գիլզուց զակրախնայով  
և գնդակից: Գիլզին լցնում են վառող և դնում կապ-  
սիւլը:

Որպէսզի հրացանը լցնենք միանգամից 5 փամ-  
փուշտներով, պիտի այդ փամփուշտները անց կաց-  
նենք օրոյմայի մէջ:

Հրացանի մասերի բաժանելը կատարւում է հե-  
տևեալ կերպով.—1) հանել տիկը—դրա համար հար-  
կաւոր է շտիկը խօմոււր գարձնել դէպի ձախ, որպէսզի,  
մուլեօկն ընկնի մուշկայի դէմ և ափով թեթև կեր-  
պով շտիկի շէյկային հարւածելով հանել. 2) հանել  
տօմպօլը—պտտացնելով հանել իր բնից. 3) զատօրը  
կօրօքկայից հանել—ձախ ձեռքի մատով սեղմել սպուս-  
կօվոյ կրիչօկի պոչը, իսկ աջով դարձնել զատօրի  
ըուկօեադկան դէպի ձախ և հանել ստովի կօրօքկա-  
յից. 4) հանել ստօլի նակլադկան—թուլացնել դոյգ  
ուազդվիմոյ օղակները, թուլացնել վերին անտարկան,  
հանել վերին ուազդվիմոյ օղակը և հանել ստովի  
նակլադկան, քաշելով նրան ստովի վրայով դէպի վեր,  
մուշկայի մօտ. 5) բաժանել ստօլը լօժայից—դրա  
համար հարկաւոր է պտտացնելով հանել ուազօրի և  
պոչի վիճակը, հանել մազագիննայա կօրօքկան, հա-  
նել ներքին ուազդէիմոյ օղակը և բաժանել ստովը  
լօժայից:

Հրացանի ամբողջովին մասերի բաժանելը պիտի  
կատարէ ուսուցչի հսկողութեամբ:

Հրացանի մասերի սարելը կատարւում է հետե-  
ւեալ կերպով. 1) դնել ստօլն իր կօրօքկայով լօժայի

մէջ, մազագիննայա կօրօքկան անց կացնել իր տեղը.  
Վիճակը ամբացնել, անց կացնել ներքին ուազդվիմոյ  
կօյցօն, անցկացնել ստովի նակլադկան, անց կաց-  
նել վերին ուազդվիմոյ կօյցօն և ամբացնել, 2)  
անցկացնել զատօրը ստովի կօրօքկայի անցքի մէջ.  
3) անցկացնել տօմպօլը և պտտացնելով ամբացնել իր  
տեղում. 4) անցկացնել տիկը ստովի վրայ և դարձ-  
նել շտիկի խօմուտիկը դէպի աջ մինչև օտկազը:

Հրացանը սարքելուց յետոյ ստուգել նրա զանա-  
զան մասերի գործելը:

### ՀՐԱՑԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ:

1) Զօրանցներում հրացանը պիտի պահել պի-  
րամիդների վրայ—շտիկն ամբացրած, զատօրը բաց  
և կուրօկը դէպի ձախ դարձրած:

2) Բնակարաններում ապրելիս, եթէ պիրամիդ-  
ներ չկան, թոյլատրւում է հրացանը ամուր հանգոյ-  
ցով կախել պատից կամ առաստաղից:

Հրացան արձակելը եւ գնդակի բռիչը: Երբ,  
կուրօկի բաց թողնելուց, զատօրի ուղարնիկը խըփ-  
ւում է կապսիւին, ապա գիլզու մէջ գտնւած վա-  
սովը բոցավառւում է, առաջնուում են զագեր, որոնք  
գնդակը ստովի անցքից գուրս են մղում. պայթիւնի  
միջոցին հրացանը մի քիչ յետ է հրում. այս յետ  
հրելը կոչւում է օսքաչա: Հրացանը նշան բռնելու  
համար ծառայում են պրիցելը և մուշկան: Հրացանը  
ուղղելը կոչւում է նշան դնել (պրիցելիվանիէ): Մի-  
շնի (նշանի) այն կէտը, դէպի ուր ուղղում ենք հրա-  
ցանը, կոչւում է նշանակէ (տօչկա պրիցելօվանիա):

Այս գիծը, որը հրացան արձակողի աչքից անցնում է պրիցէլի պրօրէզի մէջտեղից և մուշկայի գագաթով դէպի նշանի կէտը—կոչւում է նշանազիծ (լինիեա պրիցէլօվանիա):

Նշան դնելու համար անհրաժեշտ է.

1) Նայել նշանակէտին.

2) Փակել ձախ աչքը իսկ աջով նայել պրիցէլի պրօրէզի բացւածքով մուշկային այնպէս, որ մուշկան գանտի պրիցէլի պրօրէզի մէջտեղում և լինի ծայրերին հաւասար:

3) Հրացանն ուղղել այնպէս, որ մուշկայի գագաթն երևայ նշանակէտի տակ, մնալով պրիցէլի պրօրէզի մէջ տեղին և ծայրերին հաւասար:

Նշանառութեան կէտի որուելը: Ինչքան նշանակէտը հեռու է, այնքան էլ բարձր պիտի ուղղւած լինի ստուլի կանալը, որ գնդակը նշանին դիպչի: Ստուլի կանալը դէպի նշանը ճիշտ ուղղութիւն տալու համար ծառայում է պրիցէլը:

Պրիցէլը, նայած թէ ինչպէս է դրւած, կոչւում է մօտական (պօստօեաննի) եւ ըստ Տարածութեան (պօստապօեանիիւ):

Երբ պրիցէլի ումկան (նշանաշրջանակը) ցած է թողնւած և խօմուտիկն ընկած է պրիցէնայա կօլոդկայի առաջին (ատորին) աստիճանի վրայ, այդ կոչւում է մօտական նշան (պօստօեաննի պրիցէլ):

Երբ պրիցէնի խամուտիկը դրւած է պրիցէնայա կօլոդկայի ուրիշ աստիճանների վրայ, բացի առաջինից, կամ պրիցէնայա ումկայի բաժանումների վրայ, կոչւում է նշան ըստ Տարածութեան (պրիցէլ պօստօեանիիւ):

Նպատակին (նշանակէտին) չկպչելու պատճառները երեք են. 1) հրացանի լաւ չլինելը, 2) միատեսակ մուշկա վերցնել, ճիշդ նշան դնել և պայմին առաջցնել չկարողանալը և 3) վատ, գնդակի թռիչքին խանգարիչ եղանակը:

Հրացանաձգութիւնը կատարւում է՝ կանգնած, չոքած և պառկած: Եթէ կայ պահւելու տեղ, օրինակ հողաթումբ, փոս, ծառ և այլն, ապա հարկաւոր է թագնւել դրանց ետև և հրացան արձակել ինչպէս յարմար է:

### ՀՐԱՑԱՆԱՁԳՈՒԹԵԱՆ ԶԵՒԵՐԻ ՈՒՍՈՒՄԸ:

Հրացանաձգութեան ձևերի սովորելը պիտի կատարւի հետևեալ կարգով (աստիճաններով). 1) իզգօտօվկա (նախապատրաստութիւն)—հրացանը լցնելու հետ միասին—նախ կանգնած ապա չոքած և պառկած, 2) պրիցէլ դնելը, 3) հրացանի կոթն ուսին կպցնելը, նշան դնելն ու արձակելը և 4) հրացանաձգութեան դադարեցնելը:

### ՀՐԱՑԱՆԱՁԳՈՒԹԵԱՆ ԶԵՒԵՐԸ

Իզգօտօվկա (նախապատրաստութիւն)

Կանգնած հրացանաձգութեան նախապատրաստելու համար հրացանը վերցնւում է ոտի մօտից միանգամից (մի պրիեօմով): Դրա համար հարկաւոր է կէս-պտոյտ դառնալ դէպի աջ և ձախ ոտը դնել դէպի ձախ նոր ուղղութեամբ այնպէս, որ մարմինն ստանայ կայուն (ամուր) դրութիւն: Միաժամանակ

աջ ձեռքով գցել հրացանը դէպի առաջ, ձախ ձեռքի վրայ: Այս անելուց յետոյ հրացանը պիտի ստանայ անսպիսի դրութիւն, որ կոթը (արիկադ) կրծքի աջ կողմից լինի փամփշտամանի վրայ, իսկ հրացանի բերանը (դուլօ) վզի բարձրութեան վրայ: Նայել նշանին: Հրացանն այս կերպ վերցնելուց յետոյ իսկոյն լցնել:

### ՆՇԱՆ (պրիցէլ) ԴՆԵԼԸ

400 քայլից ոչ-աւելի տարածութեան վրայ պրիցէնայա ուամկան պիտի ընկած լինի պրիցէնայա կօրդկայի վրայ, իսկ խօմուտիկը գտնուի առաջին աստիճանի վրայ 4 թուանշանի մօտ:

Եթէ հարկաւոր է արձակել 400—1200 քայլ տարածութեան վրայ, ապա հարկաւոր է բարձրացնել պրիցէնայա ուամկան և քաշել խամուտիկն այն աստիճանի վրայ, ուր ցոյց է տւած հարկաւոր տարածութիւնը: Բէրդան հրացանի պրիցէնայա ուամկայի վրայ կայ գծիկներ, որոնց մօտ նշանակւած են թւեր: Հարկաւոր տարածութեան վրայ արձակելու համար պիտի խօմուտիկը կանգնացնել պրիցէնայա ուամկայի այն գծիկի վրայ, որի մօտի թւանշանը ցոյց է տալիս մեզ հարկաւոր տարածութիւնը:

### ՀՐԱՑԱՆԻ ԿՈԹՆ ՈՒՍԻՆ ԿՊՑՆԵԼՆ ՈՒ ՆՇԱՆ ԲՈՆԵԼԸ:

Ուշագրութեամբ նայել նշանակէտին, ապա աջ ձեռքի ցուցամատը կորացնել կուրօկի պոչի վրայ, ոոյն ձեռքի մնացած մատներով ամուր պահել հրա-

ցանի կոթն ուսի մէջ: Զախ ձեռքով պահել հրացանն ում ինչպէս աւելի յարմար է: Ապա գլուխը թէքել կոթի վրայ, փակել ձախ աչքը, իսկ աջով նայել պրիցէլի պրօրէզով մուշկային ուշագրութիւն դարձնելով, որ մուշկան գտնուի պրիցէլի պրօրէզի մէջտեղը և նրա ծայրերի հետ հաւասար: Յետոյ հրացանն ուղղել նշանի տակից դէպի վեր—այնպէս, որ նշանի մէջտեղը լինի մուշկայի գագաթին: Նշան բոնելիս ուշագրութեան առնել որ. 1) հրացանը մի կողմի վրայ թէքւած չլինի, 2) աջ ձեռքով հրացանի կոթն ամուր պահուի ուսի մէջ, 3) հրացանը լինի ձախ ձեռքի ափում, այս գէպքում որպէս յենարան և 4) մարմինը չափից գուրս լարւած դրութեան մէջ չլինի:

Արձակելը: Արձակելու համար (կօմանդայով կամ առանց կօմանդի) հարկաւոր է չնչառութիւնը դադարացնելով ցուցամատով (կարելի է և միջամատով, եթէ ցուցամատով անյարմար է) շատ կամաց սեղմել սպուսկօվայ կրիչօկի պոչը, աչքով բոլոր ժամանակ հակել, որ մուշկայի դրութիւնն ուղիղ լինի. աջ ձեռքի մնացած մատներով ամուր սեղմել կոթի վիզը (շէյկա) և պահել հրացանն ուսի մէջ:

Արձակելուց յետոյ հրացանն շատալով բոնել այնպէս, ինչպէս նախապատրաստելու ժամանակ (իզգօտօվկա) և իսկոյն լցնել:

### ՀՐԱՑԱՆՆ ՕԲՕՅՄԱՅԻՑ ԼՅՆԵԼԸ:

Հրացանն օբօյմայից լցնելու համար պիտի բաց անել զատւօրը, աջ ձեռքով փամփուշտամանից վերցնել փամփուշտներ անցկացրած մի օբօյմա և ուղ-

զահայեաց կերպով (օտվէսնօ) անց կացնել ստւոլի կօրօքկայի պազի մէջ (արանքում), աջ ձեռքի բութ մատով սեղմել օբօյմայի մօտից վերին փամփուշտը և հասցնել փամփուշտները մագաղիննայա կօրօքկան այնպէս, որ վերին փամփուշտը լինի ստվօյնի կօրօքկայի մէջ. յետոյ դէն ձգել օբօյման և զատւօրը փակել:

Հրացանը մի փամփուշտով լցնելը կատարւում է այնպէս, ինչպէս բէրդան հրացանի լցնելը. այսինքն աջ ձեռքով փամփուշտամանից պիտի հանել մի փամփուշտ, դնել պատրօննիկի մէջ և զատւօրը փակել: Հրացանը դատարկելու համար պիտի զատւօրը բաց անել, որը յետ քաշւելով քաշում է պատրօննիկից փամփուշտը, ապա ստվօյնի կօրօքկայից փամփուշտը վերցնել և դնել փամփուշտամանի մէջ:

### ԶՈՐԱԽԱՂԻ ՈՒՍՈՒՄԸՆ:

Ստրօյ (զօրքի դասաւորութիւն) կոչւում է մարտիկների որոշեալ կերպով դասաւորումը միասին կարդաւորման, շարժողութեան և գործողութեան համար: Զօրախաղի ուսումը կայանում է — կանգնելում (ստօյկա), դառնալում (պօփօրօտ), քայլելում (մարշիրօվկա) և հրացանաշարժութեան մէջ (հրացանաշարժութիւնն է — «նա ուռկու», «նա կարառւ», «նա պլէչօ» և «նա ռեմէն»):

Յրւած կարգաւորում (ոազսիպնօյ ստրօյ): Որպէսզի հակառակորդի հետ ընդհատւելիս նրանց կրակից քիչ կորուստ ունենանք, ոտաները դասաւորում են կուելու համար (բօեվոյ պօրեաղօկ), որ բաղկա-

ցած է ցէպից (շղթայ) և սեղերվից (օգնական գօրք): Յրւած կարգաւորման մէջ գտնվող մարտիկի պարականութիւնները: 1) իմանալ իր մարտական խընդիրը, 2) միշտ կապ պահպանել ընկերների հետ, 3) ընկերներին օգնել, 4) ինքնակամ տեղից չհեռանալ, 5) յարմարւել տեղի հետ, այսինքն ընտրել ծածկած և հրացանաձգութեան համար յարմար տեղ, 6) հրացան արձակել միայն հրամայելուց, 7) արձակել ինչպէս ցոյց կարւի — ուշ-ուշ (ոէդկօ) կամ յաճախ (չաստօ), 8) ըստ սուլիչի (սւիստոկ) դադարեցնել հրացանաձգութիւնը, 9) առաջ շարժելուս պահպանել ուղղութիւնը, 10) յարձակման (ատակա) ժամանակ գնալ արագ — եթէ հրամայւած է — արձակելով առանց նշան դնելու, 11) եթէ իշխանաւորն հեռու է վարւել ըստ իր հայեցողութեան, 12) փոխարինել պակասած իշխանաւորին և շարունակել սկսած գործը:

Սւինամարտի (շտիկօվօյ բօյ) ուսումը: Սւինամարտի արւեստը կայանում է նրանում, որ կարողանաս արագ և ուժեղ հարւածել հակառակորդին մինչև նա այդ կանի: Սւինով հարւածելու համար հրացանը վերցնում է «նա սուկու»:

Մարմնամարգութիւնը մարտիկին նախապատրաստում է զօրախաղի ուսման համար, ուսզմական և արշաւանքի կեանքի տանելուն, տեղական արգելքները յալթահարելուն: Մարմնամարգութիւնը բաժանում է — պասսիւնայա (կրաւորական) և գործիքների վրայ: Մարմնամարգութեան ուսուցման գործիքներն են՝ ձի օղակներով, հորիզոնական գերաններ, գուրնիկ, տրապեցիա, փայտեր ազատ շարժողութեան համար և ձողեր վերև թռչելու համար:

Պարզեւներ (նագրադա), որ կարող է ստանալ  
մարտիկը պատերազմի ժամանակ բաց հանդիսանա-  
լուց եւ մարդասիրական սխրագործութեան համար:  
Իւրաքանչիւր մարտիկ պատերազմի ժամանակ, օրէն-  
քով նախատեսւած, աչքի ընկնող արիութեան հա-  
մար, կարող է ստանալ գերազանցութեան նշան—  
Զինւորական շքանշան, որն ունի 4 աստիճան 1) ոսկէ  
խաչ բանտով, 2) ոսկէ խաչ առանց բանտի, 3) ար-  
ծաթէ խաչ բանտով և 4) արծաթէ խաչ առանց բանտի:  
Խաղաղ ժամանակ մարտիկը կարող է ստանալ  
մեդալ Վլադիմիրեան լենտի վրայ մարդասիրական  
քաջութեան, խեղտւողին ազատելու, հրդէնի միջից  
փրկելու համար երբ իր կեանքն ակներեւ վտանգի է  
ենթարկում:

Արիութեան և արժանաւոր ծառայութեան հա-  
մար խաղաղ ժամանակ մարտիկը կարող է ստանալ  
և գերազանցութեան նշան Ա. Աննայի շքանշան:



Գիմը 10 կոպ.

Հ-Արմ.  
2-4200<sub>0</sub>

Պահանջողները պիտի գիմեն հետևեալ հասցէով՝ Կу-  
таисъ, 201 пѣхотный Потійскій полкъ, штабсъ-капитану  
Купріянову.

2013

«Ազգային գրադարան»



15882 NL0048840

